Արձանագրություն 3

«ԷԱՃԱՊՁԲ-2018/16-2-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «01» «հոկտեմբերի» 2018թ.

ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Լ.Դանիելյան

Հանձնաժողովի անդամներ՝ Է.Միրոյան, Կ.Մկրտչյան, Հ.Սարգսյան, Մ.Գրիգորյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Տ.Միրզոյան

Բացակայում էին՝

1. «ԷԱՃԱՊՁԲ-2018/16-2-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին

1. Մասնակիցների կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

ա) «Օրթ Իմպլանտ» ՍՊ ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի օրենքով նախատեսված շեմը գերազանցող 143.703 ՀՀ դրամ ժամկետանց պարտավորություններ,

բ) «Էսզեթ Ֆարմա» ՍՊ ընկերության կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը ներկայցվել է ոչ ամբողջական:

2. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 23-րդ դրույթներով՝ քարտուղարը նույն օրը համակարգի միջոցով ծանուցել է վերոհիշյալ մասնակիցներին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:
3. Սահմանված ժամկետում «Էսզեթ Ֆարմա» ՍՊ ընկերության կողմից արձանագրված անհամապատասխանությունը շտկվել է, «Օրթ Իմպլանտ» ՍՊ ընկերության կողմից՝ ոչ:
4. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 19-րդ կետ 4-րդ ենթակետի և 20-րդ կետի դրույթներով՝ հանձնաժողովը որոշեց.

ա) մերժել «Օրթ Իմպլանտ» ՍՊ ընկերության հայտը /N1-13 չափաբաժիններ/: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ N1-13 չափաբաժինների մասով հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ չկան, վերոհիշյալ չափաբաժինները «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով հայտարարվում են չկայացած,

բ) N 14-15 չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել «Ար-Մեդիկա» ՍՊ ընկերությանը, N 16 չափաբաժնի մասով՝ «Մարիյա Մեդ Քո» ՍՊ ընկերությանը, N 17 չափաբաժնի մասով՝ «Էսզեթ Ֆարմա» ՍՊ ընկերությանը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2 Պայմանագիր կնքելու որոշման մասին

Անգործության ժամկետը լրանալուց հետո գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան «Ար-Մեդիկա» ՍՊ, «Մարիյա Մեդ Քօ» ՍՊ և «Էսզեթ Ֆարմա» ՍՊ ընկերությունների հետ կնքվելու են գնման պայմանագրեր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ստորագրությունները

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Լ.Դաիելյան

Անդամներ՝ _____ Է.Միրոյան

_____ Կ.Մկրտչյան

_____ Հ.Սարգսյան

_____ Մ.Գրիգորյան

Քարտուղար՝ _____ Տ.Միրզոյան